

չուզէ և ոչ ալ Նէննէյէն, որովհետեւ ինքն է որ այս տանս մէջ կը հրամայէ:

ԹՈՍԻ

Ի՞նչ կը մտնայ Նէննէյէն: Յարմար առիթը տրն է:

ՅՈՒԼԻԱ

Այս իրիկուն Ակումբին մէջ նուագահանդէս կայ՝ ամառնային պզտիկ Յուցահանդէսին բացման համար: Ինչ որ կեցի տասուերկու հատ մը ուրուանկարներ: Հելմէր Սորիլ շատ պնդեց որ նուագահանդէսին ալ երթամ: Կ'ուզէ զիս ներկայացնել Կուրիլի, հռչակաւոր փարիզացի վաճառականին որ ասկէ կ'անցնի:

ԹՈՍԻ

Խենթ է:

ՅՈՒԼԻԱ

Եւ ստուգիւ իրեն ոչ ըսի: Մեղք, որովհետեւ Հելմէր կ'ապահովցնէ իմ բոլոր ուրուանկարներս ծախելու:

ԹՈՍԻ

Շաղակրատանք:

ՅՈՒԼԻԱ

Չեմ տեսնար թէ ինչ գէշութիւն կրնայ ըլլալ:

ԹՈՍԻ

Հօրս հետ կ'երթաս:

ՅՈՒԼԻԱ

Ո՛հ խեղճ մարդը, իրիկունը յոգնած է:

ԹՈՍԻ

Այն ատեն ոչ:

ՅՈՒԼԻԱ

Խօսքի վրայ կորսնցուցիր:

ԹՈՍԻ

Ի՞նչ: Փող մըն ալ պարտական չեմ: Բայց այսօր կը զգամ թէ կը յաջողիմ:

ՅՈՒԼԻԱ

Հո՛ն կը դառնաս:

ԹՈՍԻ

Նախաճաշի հոն եմ:

ՅՈՒԼԻԱ

Ինքը Օւլոֆն ալ կը խաղայ:

ԹՈՍԻ

Երբեք: Մանաւանդ թէ չախորժիր:

ՅՈՒԼԻԱ Թոմի աչքը մանաւու համար:

Ի՛նչ որտագրաւ կերպարանք: Կարծես թէ Մատթոյ Լուգայի աստուածածին մըն է: Մտէպ առաւօտը կ'անցնի ասկէ՝ անպիտական զոյգ մը նծոյգ կառավարելով: Խորհրդաւոր և հրացական կերպ մը ունի:

ԹՈՍԻ

Ձիս դաշնակից ունենալու համար զիս կը խարեն: — Ի՛նչ ցած բան է որ մտածելու և ընելու վրայ ենք դու և ես:

ՅՈՒԼԻԱ

Ինչու ցած:

ԹՈՍԻ

Ձե՛ս հասկնար: Ըսել է թէ ինձմէ աւելի բաւ ես: Վասն զի ես կը հասկնամ և...:

Ձեռքը կ'երկնցնէ:

Յիսուն, երթանք:

ՅՈՒԼԻԱ

Իբրեւ թէ Ակումբը բարոյական տեղ մը չըլլար: Ամբողջ օտարական գաղութը հոն կ'երթայ: Հելմէր առաջարկեց էր գալու զիս առնելու և նորէն բերելու: Բայց ասիկայ իմ գործիս չի գար: Ձէ թէ գէշ բան մը կայ. այլ տեսակ մը բաներու մէջ որտաքոյ կարգի չըլճայեաց եմ: Մերն ալ պիտի գար:

ԹՈՍԻ

Ժամը քանի՞ն է նուագահանդէսը:

ՅՈՒԼԻԱ

Իննէն կէս գիշեր: Ո՛հ ա՛յ բոլորովին հրաժարեցայ: Հօրդ պիտի ըսեմ, որպէս զի վերջէն զիս չի կշտամբէ առիթը կորսնցնելուս համար: Բայց առանց վրայ տալու: Չալով զրամին....

Թղթապանակը զրգանէն կը հանէ:

Երկու ոսկի կու տամ քեզի:

ԹՈՍԻ

Եւ երբ ֆրանք կառքին համար, չեմ կրնար հոն փոշոտած հասնիլ:

ՅՈՒԼԻԱ Կու տայ երեք ֆրանք:

Առ:

ԹՈՍԻ

Շնորհակալ եմ:

ՅՈՒԼԻԱ

Սակայն թէ որ վաստիկա կէս կ'ընենք:

ԹՈՍԻ

Լաւ:

Թարգմ. Հ. ԱՐԻՍՏԱՆԿԻՍ ՔԱՍԳԱՆՅՈՒԼԻԱՆ

Շարայարեցի



Ք Ի Տ Ա Կ Ա Ն Ք

Հտիսունի զարմանայի նոր գիտար: — Անցեալ տարի Նիւ Եօքի թերթերը գրեցին թէ Հտիսուն այլ եւս պատրաստ է ուսումնաւ կան աշխարհին ծանօթացնելու իրեն նո-

րագոյն մի գիւտը. որ եթէ յաջողութեամբ պսակուի, յիրաւի ամենամեծ յեղափոխութիւն պիտի պատճառէ մինչեւ ցարդ գործածուած շարժական ազդակներու: Խնդիրը նոր մեքենայ մը գտած ըլլալուն վրայ է, որով պիտի յաջողինք՝ ինչպէս կաթսայի մէջ կ'ուռնենա՞նք շոգի՝ դիւրութեամբ ունենալու եւ ինկտրական գորութիւն:

Եօթը տարի առաջ, նոյն ինքն Էստիսոն կ'ըսէր թէ. «Նմանօրինակ գիւտ մը ելեկտրութեան յառաջագիմելուն ամենամեծ քայլը պիտի ըլլայ»: Առանց կնճոռոտ և բազմաթիւ մեքենայից միջամտութեան, պարզ գործիքով մը հանքածիւն ուղղակի կերպով ելեկտրութիւն տալը բերելէ աւելի մեծագոյն գիւտ թերեւս անկարելի է ստեղծել. անով պիտի շարժին գործատանց շարժիչները և մեքենաները: Տներու մէջ, խոհանոց, լոյս, գանգակ, վառարան ելեկտրութեան պիտի փոխարկուին. կառք, շոգենաւ, շոգեկառք՝ ելեկտրականք, ելեկտրանաւ, ելեկտրական երկաթուղի պիտի կոչուին: Այլ եւս շոգին՝ ելեկտրութենէ ընկճեալ և անարգեալ պիտի մնայ: «Հասանք ժամանակին, որ զարմեզ ծառայող՝ շոգեկան մեքենայք անգործութեան պիտի դատապարտուին, լաւ եւս պիտի ջնջուին: Անդրոյկիանեան շոգենաւք թէպէտեւ օրըստօրէ իրենց ընթացքը երազելու վրայ են, յանկարծ անգամաւրոյժ պիտի մնան ուլիկանոսը և կամ նուազ օրերէ կտրող ելեկտրական նաւուց ծննդեամբը»: 1891ին ասոնք Էստիսոնի խօսքերն էին: Արժմ կարծես ալք երեւակայական խօսքերը պիտի իրականանան: Ասով կարելի պիտի ըլլայ միշտ ելեկտրական մարտկոցները ամբարեալ պահել, և հարկ պիտի չըլլայ ինքնաշարժը և տեղաշարժը՝ քաղաք տանիլ, կամ ելեկտրականութեան գործատուներ առաջնորդել: Ամէն տուն պիտի ունենայ, իրեն ամենէն ածինգին կիզման և լուսոյ ելեկտրութեան գործին, որով և ամէն խրճիթ ելեկտրական լուսով պիտի փառաւորուի:

Մինչեւ ցարդ գաղտնի պահուած է այդ նոր գործիքին էութիւնը բայց գիտենք որ՝ նա կայացած է. «Յուրաք էր կծկեցընէ՝ իսկ տաքը կ'ընդլայնէ՝ ամէն մարմին»՝ Եղգրան

վրայ: Անշուշտ քիչ ատենէն կը լսենք այս խնդրոյն վերջնական լուծումը, վասն զի Էստիսոն խոստացած է հրատարակել զայն, և արդէն մասնաւոր ընկերութիւն մը կազմակերպուած է նոր գիւտին կիրարկումը տարածելու համար:

Ակնոց մքոտքեան մէջ տեսնելու համար — Անցեալ տարի խօսուեցաւ նաեւ մթութեան մէջ տեսնելու համար հնարուած ակնոցի վրայ՝ որ թէկիւր խտլալացոյ գիւտն էր:

Այս ակնոցները գոգաւոր և կորնթարդ կրկին ոսպնաձեւով էին ու երկուքին մէջ տեղը մաշկ մը կը գտնուէր՝ որուն էութիւնը և պատրաստութեան գաղտնիքը հնարողին սեպակալն էր: Թէկիւր իւր գիւտին նմուշը, ծանօթ գաղղիացոյ մը ցուցընդիւլ, վերջինս հետեւեալ տեղեկութիւնքը կու տայ. «Ինչ որ է հեռախօսը նկատմամբ հեռագրոյ, նոյնն է նաեւ այս գործիս տեսաբանութեան (optique) բոլոր գործեաց բաղդատմամբ: Ակնոցս կատուի աչաց յասկութիւնն ունի. առաջին անգամ գործածելով՝ Հիացումն անբացատրելի է: Մթութեան մէջ ինկած շատ մը մանր իրեր գիւրաւ ժողվեցի գտնելն. գիշերուան ժամը 7ին փ. 1. Մարտչլի գծին վրայ եղող երկայն գետնուղիէ մը առանց լոյս մ'ըլլալու և կանթիղ մ'ունենալու համարձակութեամբ անցայ: Իսկոյն գաղղիացի քաղաքապետ մը 1 միլիոն ֆրանքի կը գնէ այս գիւտս:

Հեղեղակի թերեւս Ռէօնտիէնի Գէ և կամ անգլամանիշակագոյն ultraviolet ճառագայթներէ յղացած է իւր գիւտը՝ որունք մարդու աչաց անտեսանելի լոյսեր են: Ինչ որ ալ ըլլայ, զեռ ստոյգ տեղեկութիւնն է, կը պակսին այս գիւտիս նկատմամբ. թերեւս կատարեալագործուելու հետ է: Եթէ ստոյգ գործածելի բան մ'ըլլայ, մեծամեծ օգուտներ կ'ակնկալուին:

Առանց այս ակնոցս ունենալու մթութեան մէջ՝ լրագիր կամ գիրք ալ պիտի կարենանք կարդալ, ինչպէս: — Տպագրութեան մեխանիկ մէջ փոսփորականութիւն ներմուծելով: